




ՊԱՏՄԱ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀԱՅՐԻԿ ՎԱՐԴԱՊԵՏ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՍԻՄԵՈՆ ԵՐԵՎԱՆՑԻ ԿԾԹՈՂԻԿՈՍԻ ՊԱՅՔԱՐԸ ԵՂՎԱՆԻՑ ԿԾԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԵՎ ԿՈՍՏՈՆԴՆՈՒՊՈԼՍԻ ՊԱՏՐԻՄՐՔԱԿԱՆ ԸԹՈՌՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԸԽՈՒՅՑ ՀԳՏՈՒՄՆԵՐԻ ԴԵՄ

 իմեռն երևանցին մեկն էր մեր այն մեծանուն կաթողիկոսներից, որոնք նախանձախնդիր են եղել Հայ Եկեղեցու միասնականության և Մայր Աթոռ Ս. Էջմիածնի գերագահության սկզբունքներին։ Սիմեոն երևանցու օրոք Հայ Եկեղեցու միասնությանը և Մայր Աթոռի հեղինակությանը սպառնում էին լուրջ վտանգներ։ Այս օրերին կենտրոնախուզում ձգտումներ հանդիս էին բերել Աղվանից Կաթողիկոսությունը և Կոստանդնովուսի Պատրիարքությունը։ Սիմեոն կաթողիկոսը, հանում Հայ Եկեղեցու միասնության և Մայր Աթոռ Ս. Էջմիածնի իրավունքների, հետևողականորեն պայքար մղեց այս երկու Աթոռների կենտրոնախուզում ձգտումների դեմ։

1763 թվականին Աղվանից Ներսես կաթողիկոսը մահամերձ հիվանդ էր Նրա Հորդեղորդիկին՝ Խորայելը, որին Ներսեսը աղա հասակից օծել էր հպիսկոպոս, հետաքայում Աղվանից կաթողիկոս դարձելու նպատակով, տեղի Շահվերդի խանի և մեղքիների համաձայնությամբ ինքնազրույթում է կաթողիկոս և նստում Գանձակում։ Հակոբ կաթողիկոսը ապօրինի է համարում այս օծումը և Խորայելը կաթողիկոսությունը չի հաստատում։ Նույնպիսի վերաբերմունք է դրսարրում նաև Հակոբ կաթողիկոսի հաջորդ Սիմեոն կաթողիկոսը Խորայելի նկատմամբ։ Նա Խորայելին կանչում է Մայր Աթոռ, բայց վերջինս հրաժարվում է ներկայանալուց։

Միևնույն ժամանակ Գանձասարի Հովհաննես եպիսկոպոսն էլ, տեղի խանի և մելիքների աջակցությամբ, ինքնազլուխ օծվում է կաթողիկոս և նստում Գանձասարում, առ ոշինչ համարելով Սիմեոն կաթողիկոսի խորհուրդներն ու հրամանները։

Աղվանից կաթողիկոսության նման երկիրեղիկումը բացատրվում է ժամանակի քաղաքական և տնտեսական պայմաններով։ Գանձասարը, որ Աղվանից կաթողիկոսության օրինական աթոռավայրն էր, գրանցվում էր իրարհիմ խանի իշխանության սահմաններում, իսկ Գանձակը՝ Շահվերդի խանի։ Այս երկու աղեղեցիկ և միմյանց թղթամի խաններից յուրաքանչյուրը, նկատի առնելով իր տնտեսական և քաղաքական շահերը, ամեն կերպ նկրտում էր իր իշխանության ներքո ունենալ Աղվանից կաթողիկոսական Աթոռը, և այդ իսկ պատճառով միշամտում էր Հայ Եկեղեցու գործերին, պաշտպանության տակ վերցնելով մեկին կամ մյուսին։

Ստեղծված այս Եկեղեցական տագնապի առաջ, Սիմեոն կաթողիկոսը, հայրապետական հորդորներից և հրահանգներից հետո, վճռաբար դիմեց վերջին և խիստ միջոցների, հանում Հայ ժողովրդի և Հայ Եկեղեցու միասնական շահերի։ Նա բանադրեց Խորայելին և Հովհաննեսին, նրանց համարելով «Ապօրինաւոր», «կանոնաքակ», «ապրաւամբ»։ Նրանցից յուրաքանչյուրը, սակայն, ի վեամ մյուսի, ձգտում է ափաշահել Սի-

մեռն կաթողիկոսի հաճությունը և դրանով ամրապնդել իր դիրքերը:

1765 թվականի աշնանը Շահվերդի խանը, իր բարեկամ ծրեսին Հուսնի խանի միջոցով, ուժում է Սիմեոն կաթողիկոսից ստանալ Խորայելի կաթողիկոսացման հրամանը: Սիմեոն կաթողիկոսը պատասխանում է նրան: «Մինչև... ոչ գայցէ խոնարհութեամբ ի Ս. Աթոռ մեր և առ տու մեր, չէ հնար թէ արացուք մեր գայցը»¹:

Գանձակեցիները, առանց կարդալու, արշամարհանքով հետ են ուղարկում Սիմեոն կաթողիկոսի հորդորագիրը, ցույց տարով իրենց անհնազանդությունը: Իր պատասխան գրում Շահվերդի խանը, հիմնվելով ոչ ճիշտ և դիտումնավոր առդրյուրների վրա, աշխատում է ապացուցել ոչ միայն Աղվանից Աթոռի ավագագուն լինելը, այլ նաև արդարացնել գանձակեցիների ըմբռությունը: ՄՄի գքեզ այդքան մեծացուցաներ, — գրում է Շահվերդի խանը Սիմեոն կաթողիկոսին, — զի շես գու կարի իմն, քան զսա և Աթոռու սորին աւագագուն և նախ է քան դերք... կաթողիկոս մեր Խորայէմն է, և զնա ընդունիմք և ոչ զայլ ոք, եթէ դու կարի ի յայս աշխատիս, բօշ գիմացաւանք քեզ կու մնայ և մեք ի կամաց մերոց ոչ եմք դառնալոց, շատ մի երկարացուցաներոց²:

Սիմեոն կաթողիկոսը, տեսնելով որ հնարավոր չէ նամակագրությամբ հարցը լուծել, Գանձակ է ուղարկում Թիֆլիսի առաջնորդ Զաքարիա Վարդապետին, նրան հանձնարելով հանգամանորեն բացատրել խանին հարցի էտիլունը և համոզել Խորայելին էջմիածին գալու Զաքարիա Վարդապետի հետ տւղարկում են արխիվային մի քանի փաստաթթեր, որոնց համաձայն Աղվանից կաթողիկոսը պարտավոր էր ենթարկել Մայր Աթոռին և միայն նրա Գահակալից ստանալ կաթողիկոսական իշխանությունը:

Մինչ զեպքերն այսպիսի բնթացքի մեջ էին, իբրահիմ խանի թելագորությամբ Մայր Աթոռ էր փոսթացել Հովհաննես ապօրինի կաթողիկոսը, կարծելով, թե Խորայելը արդեն ճանաչվել է Մայր Աթոռի կողմից: Հովհաննեսի հետ իբրահիմ խանը իր արձակությունը առաջակացնելու համար կաթողիկոսի ուղարկել էր հետեւայ գրությունը. «Պարտիս առանց իրիք պատճառի դիրքաման կաթողիկոսութեան տալ Յովհաննէսից և փութով յետ յղելած»:

¹ Դրուտ ավագ քահանա Աղվանական, «Դիվան հայոց պատմության», Թիֆլիս, 1894 թ., 11-րդ հատ., էջ 289:

² Նույն տեղում, էջ 315—316:

³ Նույն տեղում, էջ 313:

Սիմեոն կաթողիկոս հարցը ժամանակավորապես լուծելու համար ուղղում էր Հովհաննեսին պահել Ս. էջմիածնուում իրու եպիսկոպոս և Խորայելին կանչել Մայր Աթոռ, նրանից հատզանդության գիր առնել և կաթողիկոսական իշխանությամբ ուղարկել Գանձասար: Սակայն Խորայելը մերժում է գալ իբրահիմ խանի և Հովհաննեսի մոտ, մանավանդ, որ վերջինս պատրաստ էր մըշտապես հնագանդ լինելու երդումը տալ:

Դեկտեմբերի 25-ին, Ս. էջմիածնուում, Սիմեոն կաթողիկոսը շքով և հանդիսությամբ Հովհաննեսին օծում է կաթողիկոս և նրանից վերցնում հնազանդության թուղթ, որ «Միշտ ի հնազանդության Ս. Աթոռու և աթոռակալացն սորին մնասցէ և երկրին իրոյ զնոյն պատուիքնեցէ, զի զնոյն առնիցն և ի Ս. Աթոռու եկեալ յաթոռակալաց առրին ծանիցին»⁴: Բացի այս, դրված կանոններով որոշվում էին Աղվանից կաթողիկոտության իրավասության սահմանները:

Սրանով, իհարկե, Աղվանից կաթողիկոսության տագնապը չլուծվեց: Շահվերդի խանն ու իր համախոները միայն Խորայելին էին ճանաչում որպես կաթողիկոս: Նրանք շարունակում էին իրենց պայքարը և Հովհաննեսի, և Սիմեոն կաթողիկոսի դեմ: Նրանց համար արդեն ջախիափիչ հարված էր, որ Սմենախ Հայոց կաթողիկոսն անցել էր իրենց հակառակորդի՝ Հովհաննեսի կողմը: Խորայելը ու խանը դիմում են վրաց թագավոր Հերակլ Բ-ին, որը միջնորդում է Սիմեոն կաթողիկոսի մոտ: Սիմեոն կաթողիկոսը Հերակլի մոտ է ուղարկում իր տեղապահ գիտնական Մկրտիչ Վարդապետին՝ հանգամանորեն թագավորին բացատրելու խնդրի էությունը և խոսելու այն մասին, որ Աղվանից կաթողիկոսը միշտ ենթառկելի է Մայր Աթոռին:

Մինչև 1777 թվականը Խորայելը մնում է բանադրանքի տակ: Ժողովրդից բազմաթիվ բռողքներ են ուղարկվում Սիմեոն կաթողիկոսին: Ի վերջո, Խորայելն ու իր կողմնակիցները ստիպված են լինում կոտրել իրենց համառությունը և տեղի տալ: Սիմեոն կաթողիկոսը, սակայն, անզիջող էր, բայց ստիպված է լինում համաձայնել, որովհետեւ Խորայելին ու իր կողմնակիցներին ջերմ կերպով պաշտպանում էր նաև Հերակլ թագավորը:

1777 թվականին Խորայելը, Գանձակի խանի որդի Զաքադ խանի և լուգարայինների տւշելցությամբ, համարում է Ս. էջմիածին, ողջում և բանադրանքից արձակվում է: Զաքադ խանը ճիգ ու զանք շի խնայում համու-

⁴ Նույն տեղում, էջ 367—368:

զելու Սիմեոն կաթողիկոսին, որպեսզի Խաչատրյալը լինի ամբողջ Աղվանից կաթողիկոս Սիմեոն կաթողիկոսը մերժում է խանի առաջարկը և Կտորով ասում «Մի աւելի ստիպեր զմեալ վասն այդք, զի մեր ո՛չ եմք լսեր, և դու ընդ վայր խօսերոց եմ»⁵:

Նույն տարին Սիմեոն կաթողիկոսը, Սիալի տոնից հետո, Խարայլին և Հովհանն նևսին կանչում է Ս. Էջմիածին՝ նրանց հաշտեցնելու և որոշելու նրանց կաթողիկոսական իրավասությունները։ Կանգնեցնելու նրանց զեմ-դիմաց, նախ հանդիմանում է թե՛ նրանց և թե՛ նրանց ապօրինաբար ձևուաղուդ Էպիսկոպոսներին։ Վերջիններս չըմեղանալով, պատասխանում են. «Մեր զի՞նչ արացուք, մելիքք և իշխանք երկրին բանութեամբ այնպէս ետուն առնել, մեր որպէս կարէաք ընդդիմանայ հրամանացնոց։ Պատասխանիաց (Սիմեոն կաթողիկոսը—Հ. Վ.) թէ՝ օծանողն դուք էիք, և ոնքա, պարտ էր ձեզ ասել, թէ ոչ է մարմնաւոր իշխանութիւն, պարտ է ուրեմն, զի հաւանութեամբ բոլոր երկրայնոց տանս Աղուանից լիցի և հրամանամ Ս. Էջմիածնի կաթողիկոսին, զի կայ առնուցու և անվրոդով լիցի, և մի՛ խոսվութիւն փնչ ծնցի իմէջ երկրիս։ Պատասխաննեցին թէ՝ թէպէս և եղեն ոմանք ի մէնց որ զայդ ասացին, այլ չեղև լսող, մանաւանդ թէ ոչ կարէաք ընդդիմ կալ մարմնաւորի իշխանութեամն զի տանջանք և զան և հարուածք հասուցանելոց էին զմեզ անխտիր, թէ ոչ լսէաք նուաց⁶։

Այսուհետև հաշտեցնելով երկու կաթողիկոսներին, Սիմեոնը, կանոնով ու կաթողիկոսական վճռով, որոշում է նրանց իրավասությունների սահմանները: Խորայիշը պետք է նստեր Գանձակում, իսկ Հովհաննեսը Գանձասարաբան: Նրանք միմյանց վիճակում ոտնձգովթյուններ չպիտի անեին, Խորայիշը մահից հետո Գանձակի Աթոռը պետք է դադարեր գոյովթյուն ունենալուց և մնար միայն Գանձասարի Աթոռը: Առ այս Գանձակեցիներին և մյուսներին Սիմեոն կաթողիկոսը գրում է, թե երբ «Խորայիշէ կաթողիկոսն վախճանիցի, յայնժամ թէ մի կաթողիկոսն ինիցի յայդ երկրոզդ, դուք ևս նմածառայեսչիք: Խոկ եթէ այլ ևս երկու կաթողիկոսն ինիցին, յայնժամ դուք ևս մի՛ հնազանդիցիք նոցա, և ոչ միայն ի նոցանէ, այլ Ս. Աթոռաբան»⁷:

5 Գյուղական բահանակ Աղանյանց, «Դիմուն Հայոց պատմության», 1913 թ. Թիֆլիս, 11-րդ հատ.էջ 150:

⁶ Նույն տեղում, էջ 207—208.

Դ Նույն տեղում, էջ 327:

Այս ձևով էլ ավարտվում են Աղվանից Կաթողիկոսության խնդիրները, որոնց խաղաղ և շինարար կարգավորման համար Սիմեոն կաթողիկոսը գործադրեց հնարավոր իր բոլոր ջանքերը:

• • •

Սիմեոն կաթողիկոսի ժամանակ մտահոգության առարկա էին դարձել նաև Կոստանդնոպոլսի Պատրիարքական Աթոռի խնդիրները։ Մայր Աթոռի և Կոստանդնոպոլսի Պատրիարքության միջև առաջ էին եկել տարածայն սովորություններ քաղաքական և այլ հանգամանքների պատճառով։ Սիմեոն կաթողիկոսի գլխավոր նպատակն է եղել արմատախիլ անել այդ խորթ երևույթները, սերտացնել երկու Աթոռների կապերը, զերմորեն պաշտպանելով Մայր Աթոռի նվիրապետական իրավունքները։

Մայր Աթոռի և Կոստանդնուպոլիսի Պատրիարքության հարաբերությունների միջև որոշ սառնություն է առաջ դալիս Սիմեոն կաթողիկոսի օրոք Կոստանդնուպոլիսում ապրող հայ մեծահարուստները՝ ամիրաները, մերձավոր հարաբերությունների մեջ էին Օսմանյան արքունիքի հետ և մեծ դեր էին խաղովմ մեր ազգային-եկեղեցական կյանքում։ Նրանք կարող էին ցանկացած ժամանակ Օսմանյան արքունիքից ատանալ այս կամ այն պատրիարքի հեռացման կամ հաստատման հրովարտակը։ Բացի այդ, Կոստանդնուպոլիսի հայ բնակչությունը միատարր չէր, կային և տեղացիներ, և գաղթականներ Արևելյան Հայաստանից։ Գաղթականները կամ հայաստանցիները առավելապես հակված էին դեպի Մայր Աթոռը և պաշտպանում էին նրա շահերը, իսկ տեղացիները՝ Պատրիարքարանի շահերը։ Քաջալերմիկով և հովանավորմիկով Օսմանյան արքունիքից, ամիրաները աշխատամ էին ընդլայնել Պատրիարքարանի իրավասությունների սահմանները և տիրանալ նոր վիճակների ի վեա Մայր Աթոռի Այսպիսի կացության առաջ Սիմեոն կաթողիկոսն աշխատամ էր Կոստանդնուպոլիսում ունենալ Մայր Աթոռի գործակալ (վեքիլ), որի հիմնական պարտականություններից մեկը պիտի լիներ Մայր Աթոռի գերադահ իրավունքների պաշտպանությունը։ Հաճախ էր պատհճում, որ Կոստանդնուպոլիսում Ամենայն Հայոց Կաթողիկոսի հրամաններն ու հրահանգները ձգձգվում էին, կամ չէին կատարվում։ Ավելին, պատրիարքն ու միքանի ամիրաներ նույնիսկ ընդդիմանում էին կաթողիկոսի կարգադրություններին և դժգարություններ հարուցում Կոստանդնուպոլիսում կաթողիկոսական փոխանոռող ունե-

նալու գեմ: Հետագայում երբ Սիմեոն կաթողիկոսին հաջողվում է այդ հարցը դրականապես լուծել, երկու Աթոռութերի հարաբերությունները մասնակիորեն միայն բարելավվում են: Գրիգոր պատրիարքն աշխատեց ստեղծված դրությունից իսկում և եթ օգուտ քաղել: Նա ցանկանում էր եափսէկոպոս դառնալ, ուստի խնդրում է Սիմեոն կաթողիկոսից ձեռնադրվել տեղում, երեք եափսէկոպոսների ձեռքով, պատճառաբանելով, թե իր այդ իրավասությունը վերապահում է Կոստանդնոպոլսի Աթոռին, համաձայն Նիկիայի ժողովի՝ որոշման՝ ոյերից եափսէկոպոսաց եպիսկոպոս ձեռնադրիլու: Այս առաջարկին Սիմեոն կաթողիկոսն ուղարկում է հետեւյալ Կտրական և խիստ պատասխանը.

Աւրդ ասէ հնգետասան կանոնք գոն ի յատովկ լուսաւորչացն մերոց, ընթերցիր դայս և նկատեա: զննեա: և զայլ գրեանս մեր և հարց զննագոյնս, տես, եթէ ի լուսատրշէն մերմէ մինչկ ցառ մեզ լիալ է երբեք յազգի մերում զոր խնդրեսդ և ես արարից: Իսկ եթէ ոչ, ես որպէս կարեմ ցանկաք լինել աագնոց կանոնացն և չար օրինակ ապագայից: Յետ այսորիվ գրեաց ևս, թէ հաւատա՞ս և ընդունի՞ս օրու, զի ի լուսաւորչէ անոտի Ս. Աթոռու է մայր և գոտին ամենայն եկեղեցեաց հայազնէից և հայրապետն սորին Եկեղեցոյ և եկեղեցականաց գլուխ և հրամանատու ամենայնի: Իսկ այժմ որովհետև ցրուեալք են ազգ մեր ընդ շորիս ծագս աշխարհի յայլ և այլ լիշխանութիւնս, վասն որոյ՝ որպէս թէ ըստ մեծի մասին ընկեցեալ է հիշխանութիւն և հրաման սորին և մնացեալ է սա միայն այդ կարգ, որոյ աղաքաւ որպէս թէ ծարակուոր և բռնադատեցեալ յօդուից իւրեանց թեքեն սմա գպարանցաւ: Արդ՝ այդ ևս տաւր այլում, այնուհետև զի՞նչ ոմիցի և ո՞վ զատ և զի սմա նստողն կաթողիկոս հաջոյէ և յախնամ մի՞թէ և քո դիմումանք զքեզ ոչ տանցեսցին: Գրիս, ասէ, թէ միայն ենք, դկանք եթէ միանգամ լուծցուք, այլ կարե՞մք կապել, զի սպասեն ամենեքեան և յարսպիսու լուծման... Վասն այսորիկ ասէ՝ թէ մեռանել ևս հասանիցէ ինձ այսր աղաքաւ, ոչ թողից և ոչ բաւ կամեցացցօք:

Հաջորդ պատրիարքների (Զաքարիա և Հովհաննեա) ժամանակ էլ շարունակվում է միմնուն գրությունը: Դրանց մասին Ղուկան կաթողիկոսը ցավով պատմում է. «Ինորթ տոդիք բարձրացան անդ ի պատիւ,

⁸ Գյուտ պավագ բահանա Աղաւանց, «Թիվան հայոց պատմության», 3-րդ հատ., էջ 701-702:

զամենայն բանն մեր ընդ ձախիւն կամէին շրջել, իւրովի հալէր և մաշէր լուսահոգին (Սիմեոն կաթողիկոսը—Հ. Վ.), որպէս և մեր այժմ»⁹:

«Զայսուիկ առնելով, — զրում է Ղուկան կաթողիկոսը, — թէ՛ հինն և թէ՛ նորն (պատրիարքները—Հ. Վ.) կամէին զինքեանս գլուխ ազգի ցուցանել, և իշխող հասարակութեան, ոտնագոփ առնել կամէլով զպատիմ Ս. Աթոռոյս և զսրին հայրապետի բացարձակ իշխանութիւնսն կամէին խափանել և ի ներքոյ հրամանաց իւրեանց կացուցանել»¹⁰:

Սսի և Աղթամարի կաթողիկոսական Աթոռները Սիմեոն կաթողիկոսի օրոք խաղաղ և անվրդով էին և լավ մինալորտ էր պահապանվում նրանց և Մայր Աթոռի միջև:

Սիմեոն կաթողիկոսն իր գրչով, խոսքով, հեղինակությամբ նախանձախնդրութեան պայքարեց Մայր Աթոռի գերագանությունն տւ Հայ Եկեղեցու միասնությունը զլատու տիխուր երկուովների և ձգտունների դեմ, որովհետև մեր եկեղեցական միասնությամբ արտահայտվել է նաև մեր ազգային միասնությունը: Խոսելով Աղթամարի կաթողիկոսական Աթոռի առաջ գալու մասին, նա ասում է. «Եւ ոչ միայն կաթողիկոսութիւնն բաժանեցաւ, այլ և գրեթէ բոլոր ազգն հայոց յերկուս բաժանեցաւ յայնմ հիտէ»¹¹:

Սիմեոն կաթողիկոսի համար մի էր Հայաստանյաց Եկեղեցին և մի ու անըաժան Ամենամ Հայոց Հայրապետությունը: Մեր նվիրապետական մյուս Աթոռները հանդիս են Եկեղել հետագայում բաղարական պարմանների ստիպման և փոփոխության պատճառուու:

«Էմիածնանիստ կաթողիկոսն յառաջ և յետոյ և մինչկ ցայտոր շնորհիւն Աստուծոյ և նախապատիւ, գերագան, հոչակաւոր անուանի քան զայլն ի յամենայն ազգս և է սիրելի և ահարկու ի վերայ ամենեցուն, որ եթէ հարկն պահանջիցէ և զիրաւոնս ունիցի, կարէ և բանիւ առնել զմիւս կաթողիկոսն և լուծանել ի կարքին: Նմանապէս և զեպիսկոպոսունսն և զայլ կարգատրան նոցին: Բայց նոքա ոչ բան կարեն ի կաթողիկոսն էջմիածնի, և ոչ ի կարգատրու և յաշխարհականս նորին վիճակի»¹²:

⁹ Նույն տեղում, 4-րդ հատ., էջ 278-279:

¹⁰ Նույն տեղում, էջ 321:

¹¹ Սիմեոն կաթողիկոս, «Քամբու», գլ. 1, էջ 53:

¹² Նույն տեղում, էջ 54-55:

